«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2010Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

TM AUDIT

Հայաստան Երևան 0009, Տերյան փող. 105/1 Հեռ. (374 10) 514 314 Ֆաքս (374 10) 514 351 info@tmaudit.am www.tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ No.207

Ներկայացվում է
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի բաժնետերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2010թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՀՀՀՀՍ-ների: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրինք աուդիտի միջազգային ստանդարտներով: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2010թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ՀՀՀՀՍ-ների:

Թաքուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

Սուրեն Գաբրիելյան
Աուդիտոր

14 հունիսի, 2011թ.,
ք. Երևան, Տերյան 105/1

'000 դրամ	*Ծանոթ-ն*	*31/12/10*	*31/12/09*
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	4	3,182,484	493,781
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	5	194,813	889,213
Ոչ նյութական ակտիվներ	6	1,119	1,005
Կանխավճարներ հիմնական միջոցների համար	7	54,572	108,179
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	8	1,251	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**3,434,239**	**1,492,178**
Պաշարներ	9	54,151	179,160
Կանխավճարներ պաշարների և ծառայութ.-ի համար	10	24,447	24,078
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	11	165,198	45,634
Կանխավճարներ հարկերի և պարտ. վճար. գծով		-	14,094
Փոխառություններ		1,000	-
Դրամական միջոցներ	12	135,597	744,210
Այլ ընթացիկ ակտիվներ	13	75,257	2,830
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**455,650**	**1,010,006**
Ընդամենը ակտիվներ		**3,889,889**	**2,502,184**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	14	484,281	100
Կուտակված շահույթ	15	894,674	972,637
Պահուստային կապիտալ	16	46,854	-
Ընդամենը սեփական կապիտալ		**1,425,809**	**972,737**
Հետաձգված հարկային պարտավորություններ	17	2,420	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**2,420**	**-**
Վարկեր	18	258,168	-
Փոխառություններ	19	444,144	275,893
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	20	436,824	10,733
Կանխավճարներ ծառայությունների համար	21	901,100	1,035,728
Շահութահարկի գծով պարտավորություն		51,404	202,167
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություն	22	88,230	3,984
Աշխ.-ի և այլ կարճ.հատ. գծով պարտավորություն	23	16,947	926
Շահաբաժնի գծով պարտավորություն	24	264,843	-
Այլ պարտավորություններ		-	16
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**2,461,660**	**1,529,447**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**3,889,889**	**2,502,184**

Գլխավոր տնօրեն Հ.Ֆարամազյան

Գլխավոր հաշվապահ Ա.Հովակիմյան

9-37 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	*Ծանոթ-ն*	2010	2009
Հասույթ	25	2,906,850	2,175,481
Վաճառքի ինքնարժեք	26	(1,411,541)	(787,744)
Համախառն շահույթ		**1,495,309**	**1,387,737**
Իրացման ծախսեր	27	(39,566)	
Վարչական ծախսեր	28	(217,124)	(142,420)
Գործառնական այլ գործունեությունից շահույթ (վնաս)	29	(2,306)	(2,019)
Գործառնական շահույթ		**1,236,313**	**1,243,298**
Ֆինանսական ծախսեր	30	(62,008)	(22,836)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	31	506	(7,746)
Շահույթը մինչև հարկումը		**1,174,811**	**1,212,716**
Շահութահարկի գծով ծախս	32	(237,739)	(244,535)
Զուտ շահույթ		**937,072**	**968,181**

Գլխավոր տնօրեն Հ.Ֆարամազյան

Գլխավոր հաշվապահ Ա.Հովակիմյան

'000 դրամ	*Կանոնադրական կապիտալ*	*Կուտակված շահույթ (վնաս)*	*Պահուստային կապիտալ*	*Ընդամենը*
Մնացորդը առ 1 հունվարի 2009	100	4,456	-	4,556
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	968,181	-	968,181
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009	100	972,637	-	972,737
Կանոնադրական կապիտալի համալրում	484,181	(484,181)	-	-
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	937,072	-	937,072
Շահաբաժիններ	-	(484,000)	-	(484,000)
Ներքին շարժեր	-	(46,854)	46,854	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010	484,281	894,674	46,854	1,425,809

Գլխավոր տնօրեն Հ.Ֆարամազյան

Գլխավոր հաշվապահ Ա.Հովակիմյան

'000 դրամ	*2010*	*2009*
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
վաճառքներից	3,222,076	3,432,305
այլ գործունեությունից	7,761	76
նյութերի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ստացումից	(1,216,311)	(1,169,058)
վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(189,948)	(54,099)
հարկեր, պարտադիր վճարներ	(546,138)	(76,336)
այլ գործունեությունից, այդ թվում՝	(311,177)	(21,103)
ոչ ընթացիկ ակտիվների ԱԱՀ	*(257,242)*	-
վարձավճարներ	*(27,901)*	-
գործուղում	*(10,320)*	-
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**966,263**	**2,111,785**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների վաճառքից	1,000	-
տոկոսների ստացումից	6,291	133
հիմնական միջոցների ձեռքբերումից	(1,742,305)	(1,454,267)
փոխառությունների տրամադրումից	(4,750)	-
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(1,739,764)**	**(1,454,134)**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերից և փոխառությունների ստացումից	805,622	656,630
վարկերի և փոխառությունների մարումից	(388,896)	(578,241)
վճարված տոկոսներ	(30,974)	(6,320)
վճարված շահաբաժիններ	(197,241)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**188,511**	**72,069**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(584,990)**	**729,720**
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(23,623)	13,794
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**744,210**	**696**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**135,597**	**744,210**

Գլխավոր տնօրեն Հ.Ֆարամազյան

Գլխավոր հաշվապահ Ա.Հովակիմյան